Ապրիլի 11-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկեց 15 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Ծիծեռնակաբերդ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Ծիծեռնակաբերդ հուշահամալիր «Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ» ՊՈԱԿ-ի վերակառուցման և ընդարձակման համաշինարարական աշխատանքների ծրագիրը.

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի Հայաստանի մասնաճյուղի կողմից իրականացվող «Երեխաների աջակցության կենտրոնի արտ-թերապիայի երկու սենյակների և պահակատան շինվերանորոգման և «Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի մարզադահլիճի համար սպորտային պարագաների ձեռքբերման ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի և Գավառի տարածաշրջանների համայնքներում կովերի արհեստական սերմնավորման, Արագածոտնի մարզի Սարալանջ, Ծաղկաշեն, Լուսագյուղ, Վարդենիս ու մի շարք այլ համայնքներին շինարարական նյութերի մատակարարման, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի համայնքներում կովերի արհեստական սերմնավորման ծրագրերը.

«Վերջին օրերի սբերի բարեգործություններ» կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող «Համայնքներին մաքուր խմելու ջրի ջրամատակարարում» ծրագիրը.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող Երևան քաղաքի թիվ 103 մանկապարտեզի տանիքի հիմնանորոգման նախագծման և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան քաղաքի թիվ 5 միջնակարգ դպրոցի մասնակի կահավորման ծրագրերը.

Հայաստանի Հանարպետության կրթության և գիտության նախարարության «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Կիրառական կենսաբանության գերազանցության կենտրոնի ստեղծում» ծրագիրը.

«Գործընկերություն և ուսուցում» քաղաքացիական հասարակությանը և կրթությանը աջակցող հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Երևանի Լևոն Արիսյանի անվան թիվ 127 ավագ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգման ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: